ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

20 հոկտեմբերի 2011 թվականի N 149-Ա

ք. Հրազդան

Մ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 02/12.4/16394-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2011 թվականի հոկտեմբեր 10-ի N 734-Ա որոշումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի և Իտալիայի Հանրապետության Միլանի նահանգի միջև 2010 թվականի հունիսի 7-ին ստորագրված փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում՝ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար (ծածկագիր՝ 66-1.1-1) ***Մարզպետ Գարեգինյանին*** 2011 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև հոկտեմբերի 27-ը ներառյալ գործուղել Միլան (Իտալիայի Հանրապետություն):

2. ***Մարզպետ Գարեգինյանին*** հետ կանչել ամենամյա արձակուրդից 2011 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև հոկտեմբերի 27-ը ներառյալ, 5 աշխատանքային օրով և արձակուրդը երկարաձգել 2011 թվականի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ